ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիահույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հարգելի՛ բնակիչներ,

Վերջին տարիներին Քանաքեռ-Զեյթունը նկատելի ու շոշափելի դրական փոփոխություններ է ունեցել թե՛ բակային տարածքների բարեկարգման, թե՛ կանաչապատման ու արտաքին լուսավորության և թե՛ խաղահրապարակների թվի ավելացման առումով: 2017 թվականը դրական փոփոխությունների առումով բացառություն չէր: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարությունն ու բնակիչները սերտորեն համագործակցում են ընթացիկ խնդիրները լուծելու և Քանաքեռ-Զեյթունն ավելի շենացնելու ու բարեկարգ դարձնելու ուղղությամբ: Այդ համագործակցությունը և փոխօգնությունը թերևս ամենաարժեքավոր ձեռքբերումն է և փոխադարձ վստահության խորհրդանիշը: Լիահույս եմ, որ հետագայում մենք կունենանք նոր ձեռքբերումներ և կիրականացնենք բազում օգտաբեր ծրագրեր՝ ի շահ և ի բարօրություն Քանաքեռ-Զեյթունի:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար
Արթուր Ստեփանյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017թ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում իրականացվել են ընթացիկ վերանորոգման, փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ **40470** քմ ընդհանուր մակերեսով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թ. բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ կատարվել են ջրատար խողովակների նորոգման, շքամուտքերի դռների ապակեպատման, շքամուտքերի վերանորոգման և այլ տիպի աշխատանքներ:

- Նորոգվել է **390** գծմ ջրթափ խողովակ:
- Ապակեպատվել են **200** քմ ընդհանուր մակերեսով շքամուտքերի դռներ և լուսամուտներ:
- Վերանորոգվել է **35** շենքի **80** շքամուտք:
- Վերանորոգվել է **3612** քմ ընդհանուր մակերեսով 25 հարթ և **1967** քմ ընդհանուր մակերեսով 58 թեք տանիք:
- Իրականացվել են բակային տարածքներում վնասված գույքի վերականգնման և բարեկարգման աշխատանքներ:



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. զգալի աշխատանք է կատարվել բակային տարածքների բարեկարգման ուղղությամբ:

- Նկարազարդվել է **27** բակ:
- Շահագործման է հանձնվել մինի ֆուտբոլի 1 խաղադաշտ:
- Շահագործման է հանձնվել բակային **3** տարածք:
- Տեղադրվել է մանկական **5** խաղ, **22** մարզասարք:



	Շահագործման հանձնված բակային տարածքներ	Տեղադրված համալիրների, մանկական խաղերի, մարզասարքերի քանակ
2015	3	34
2016	5	23
2017	3	27

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թվականին վարչական շրջանում մշտական ուշադրության կենտրոնում են եղել սոցիալական աջակցության ծրագրերը:

- Վարչական շրջանում գործող երեք բարեգործական ճաշարաններում օրական մեկանգամյա սնունդ է ստանում շուրջ **450** անձ:
- Վարչական շրջանում գործող երկու՝ Գերմանական Կարմիր խաչի «Գթության խոհանոց» և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի բարեգործական ճաշարանների շուրջ **360** անձի համար ՀՀ պետական և եկեղեցական տոների կապակցությամբ կազմակերպվել են տոնական միջոցառումներ (Կանանց միջազգային տոն, Սբ. Հարության տոն):
- Աշխատանքի միջազգային օրվա կապակցությամբ պատերազմի և աշխատանքի **50** վետերանների տրամադրվել է սննդի փաթեթ:
- Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող **40** ընտանիքի հատկացվել է սննդի փաթեթ:
- Մայիսյան հաղթանակի տոների կապակցությամբ Հայրենական Մեծ պատերազմի **147** վետերանների, հաշմանդամ ազատամարտիկների և արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքների հատկացվել է դրամական աջակցություն:
- Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան **70** երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Ծաղկաձորի «ԼԱՎԱ Աղբյուր» ճամբարում, իսկ **200** երեխաներ՝ վարչական շրջանում կազմակերպված երկու բակային ճամբարներում:
- Սեպտեմբերի 1-ի՝ «Գիտելիքի օրվա» կապակցությամբ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների **338** դպրոցականի, որոնցից 22-ը՝ սիրիահայ, տրվել է դպրոցական պիտույքների փաթեթ (պայուսակ և գրենական պիտույքներ):
- «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչով, Երևանի քաղաքապետարանի աջակցության ծրագրով, վարչական շրջանի **212** ընտանիքի հատկացվել է կենցաղային տեխնիկա:
- 2017թ. ապրիլ և հոկտեմբեր ամիսներին ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ ժամկետային զինծառայողների **263** ծնողներ այցելել են զորամասեր:
- Ամանորյա տոների առիթով սոցիալապես անապահով **1378** անձի տրվել են սննդի փաթեթներ, իսկ **2400** երեխաների՝ նվեր-փաթեթներ:
- Հասարակական կազմակերպությունների («Վորլդ Վիժն Հայաստան», «ՍՕՍ-Մանկական գյուղեր» ՀԲՀ, «ԱՌԴԱ» ԲՀ, «Քեթրին» ՀԿ և այլ) հետ համագործակցությամբ իրականացվել են սոցիալական և կրթական ծրագրեր՝ շուրջ **900** սոցիալապես անապահով և ՎԾ-ում բնակվող սիրիահայ ընտանիքների համար:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. իրականացվել են աշխատանքներ նախակրթական հաստատությունների վերանորոգման, սննդի որակի ստուգման, կրթամշակութային միջոցառումների կազմակերպման և այլ ուղղություններով:

- Ավարտվել են հիմնանորոգման աշխատանքները վարչական շրջանի հ. 162 մանկապարտեզում, ամբողջությամբ հիմնանորոգվել է նաև թիվ **160** մանկապարտեզը, բարեկարգվել է բակային տարածքը:
- Կազմակերպվել է փորձի փոխանակում՝ վարչական շրջանի և ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառ համայնքի կրթության ոլորտի մասնագետների միջև:
- Ապահովվել է **1911** երեխայի նախադպրոցական անվճար ուսուցում:

2017 թ. վարչական շրջանում առանձնահատուկ աշխույժ է եղել մշակութային կյանքը:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում նշվում են ՀՀ տոնական և հիշատակի օրերը, պարբերաբար կազմակերպվում են տարաբնույթ թեմատիկ միջոցառումներ, հանդեսներ, ցուցահանդեսներ, խաղեր և մրցույթներ:

- Բուն Բարեկենդանի տոնին վարչական շրջանի դպրոցների աշակերտները միացել են համաքաղաքային երթին, Ա. Տեր-Ղևոնդյանի անվ. երաժշտական դպրոցի «Արմենիա» պարային համույթը և Ղ. Սարյանի անվ. արվեստի դպրոցի դհոլահարների համույթը մասնակցել են համերգային ծրագրին:
- Սուրբ Աստվածածնի Վերափոխման (Խաղողօրհնեքի) տոնի առթիվ վարչական շրջանի Սբ. Հակոբ եկեղեցում կազմակերպվել է ծիսական արարողություն և բերքի օրհնություն, որից հետո այն բաժանվել է բնակչությանը:
- Այցելություն Մարի Իզմիրլյանի անվ. մանկատուն, ՀՕՖ և «Զատիկ» երեխաների աջակցման կենտրոններ, ինչպես նաև կազմակերպվել է էքսկուրսիա Կենդանաբանական այգի:
- «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում վարչական շրջանի Դ. Անհաղթի անվ. պուրակում կազմակերպվել է «Քանաքեռ-Զեյթունի ամառային անուրջներ» խորագրով ամառային գլխավոր միջոցառումը:
- Իրականացվել են ամենշաբաթյա զվարճալի բակային ծրագրեր, ինչպես նաև 5-օրյա բակային ճամբարներ 2 փուլերով վարչական շրջանի հ. 84 և հ. 117 դպրոցներում՝ ՍՕՍ մանկական գյուղեր ՀԿ-ի և «Վորլդ Վիժն» ՏՁԾ-ի հետ համատեղ:
- Կենտրոնացված գրադարանային համալիրում մեծ շուքով նշվեց Գրադարանավարի օրը, որտեղ ներկա են եղել 2 մասնաճյուղերի ներկայացուցիչներ, վարչական շրջանի դպրոցների աշակերտներ, մանկավարժներ և գրադարանավարներ: Վարչական շրջանի ղեկավարի անունից հանձնվել են շնորհակալագրեր վաստակաշատ գրադարանավարներին:
- Մշակութային կյանքի ակտիվացմանը նպաստեցին վարչական շրջանում գործող՝ Ա. Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական, Ղ. Սարյանի անվան և Ս. Բարխուդարյանի անվան արվեստի, Մ. Ավետիսյանի անվան կերպարվեստի դպրոցների, «Զեյթուն» մշակութային կենտրոնի վոկալ, պարային, փողային, լարային, նկարչական, ուլունքագործության, կավագործության բաժինների սաների բացօթյա բաց դասերը, որոնք տեղի են ունեցել դպրոցների հարակից տարածքներում, և որոնք թույլ տվեցին հայ արվեստն ու մշակույթը հասանելի դարձնել բոլորին:
- Արտադպրոցական կրթություն է ստացել **1798** երեխա:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. աշխույժ է եղել նաև վարչական շրջանի սպորտային կյանքը, սպորտային հաստատությունների սանները պատվավոր տեղեր են զբաղեցրել տարբեր նշանակության մրցարշավներում:

- «Զեյթուն» մշակութային կենտրոնի շախմատի խմբակի սանները մասնակցել են հունվարի 8-ից 16-ը Հայաստանի շախմատի ակադեմիայում անցկացված Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված 7-րդ հուշամրցաշարին:
- 2017 թ. մարտի 25-ին ավանդական կարատեի Զեյթունի մասնաճյուղի սանները մասնակցել են ք. Հրազդանում կայացած ակումբային առաջնությանը, իրենց ուժերը փորձել են կատա, կումիտե և կիհոն մրցաձևերում: Զեյթունի մասնաճյուղը այս անգամ ներկայացրել էր 11 մարզիկ, որոնցից 6-ը արժանացել են հաղթողի կոչմանը, իսկ մյուսները դարձել մրցանակակիրներ:
- Մարտի 17-ից 18-ը Երևան քաղաքում կայացած Ջորավար Անդրանիկի հիշատակին նվիրված հունա-հռոմեական ըմբշամարտի բաց առաջնությունում Քանաքեռ-Զեյթուն մանկապատանեկան համալիր-մարզադպրոցի սան Էդգար Մհերյանը գրավել է 3-րդ տեղը:
- Մասնակցություն ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված հանրակրթական դպրոցների 26-րդ մարզական խաղերի մրցումներին:

- Կազմակերպվել և անցկացվել են ՀՀ Ազգային Ժողովի Գավաթի խաղարկության մրցումները:
- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ֆուտզալի թիմը, ներկայացնելով Երևան քաղաքը Վանաձորում ընթացող ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված 26-րդ մարզական խաղերի հանրապետական փուլում, գրավել է 1-ին պատվավոր տեղը:
- Մ. Հերացու անվան ավագ դպրոցի բասկետբոլի տղաների թիմը մասնակցել է ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված հանրակրթական դպրոցների 26-րդ մարզական խաղերի քաղաքային փուլի մրցումներին:
- Կազմակերպվել և անցկացվել են «Լավագույն մարզական ընտանիք», ինչպես նաև «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոնի մրցումները:
- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ավանդական կարատեի մարզիկները մասնակցել են օգոստոսի 6-ին Սոչի քաղաքում կայացած ավանդական կարատեի միջազգային ակումբային մրցաշարին, որտեղ անհատական կումիտե մրցաձևում Միքայել Մաթոսյանը գրավել է պատվավոր 1-ին, իսկ Էրիկ Հովսեփյանը՝ 2-րդ տեղը:
- Մասնակցություն «Տարեցների հանրապետական խաղեր» մրցույթի քաղաքային փուլի մրցումներին:
- Անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի քաղաքային փուլը, որում թիվ 127 ավագ դպրոցի թիմը գրավել է 3-րդ տեղը:
- Հ. 127 ավագ դպրոցի թիմը մասնակցել է հանրապետական հրաձգարանում կայացած ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված ՀՀ դպրոցականների «Դիպուկ հրաձիգ» հանրապետական մրցումներին և գրավել պատվավոր 1-ին տեղը:

- Հոկտեմբերի 17-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում տեղի է ունեցել մանկապատանեկան համալիր-մարզադպրոցի նոր մասնաշենքի բացման հանդիսավոր արարողությունը: Մարզադպրոցը համալրված է անհրաժեշտ գույքով, գործելու են ըմբշամարտի և ձյուդոյի խմբակներ:
- Սեպտեմբերի 21-22-ը Լիտվայի Հանրապետության Կլայպեդա քաղաքում կայացած «Բանակայինների աշխարհի առաջնությունում» Քանաքեռ-Զեյթուն մանկապատանեկան համալիր-մարզադպրոցի սան Արմեն Հակոբյանը 71 կգ. քաշային կարգում գրավել է 2-րդ տեղը՝ դառնալով աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր:
- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ավանդական կարատեի Զեյթունի մասնաճյուղի մարզիկները՝ մարզիչ, աշխարհի չեմպիոն Նարեկ Իսկանդարյանի գլխավորությամբ, մասնակցել են Լեհաստանի Լյուբլին քաղաքում կայացած ավանդական կարատեի Եվրոպայի գավաթի 5-րդ առաջնությանը և զբաղեցրել պատվավոր տեղեր:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

2017 թ. կանաչապատման ծավալուն աշխատանքներ են իրականացվել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում կատարվել են բարեկարգման, խնամքի և պահպանման աշխատանքներ:
- Իրականացվել են հուշարձանների և դրանց շրջակա տարածքների մաքրման և խնամքի աշխատանքներ:
- Վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում տնկվել է **2570** ծառ և թուփ:
- Բարելավվել է **3150** քմ սիզամարգ:
- Վերանորոգվել է **280** գծմ ոռոգման ջրագիծ:
- Վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում տնկվել է **128500** ծաղիկ:
- Էտվել, ձևավորվել և երիտասարդացվել է **955** ծառ, ինչպես նաև հատվել են չոր կամ անկման վտանգ ներկայացնող ծառեր:

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թ. զգալի աշխատանք է իրականացվել վարչական շրջանում ջրամատակարարման բարելավման, մալուխալարերի փոխարինման, լուսավորության ցանցի ընդլայնման ուղղությամբ:

- «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ կողմից Լեփսիուսի, Կ. Ուլնեցու, Ա. Տիգրանյան, Դ. Անհաղթ փողոցներում իրականացվել են ջրամատակարարման բարելավման աշխատանքներ:
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից բազմաբնակարան 12 շենքերում իրականացվել են **870** գծմ մալուխների փոխարինման աշխատանքներ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ

2017 թ. շարունակվել են արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները:

- Իրականացվել են **4890** գծմ արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ՝ **133** լուսակետով:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. ակտիվ աշխատանք է իրականացվել արտաքին կապերի զարգացման ուղղությամբ:

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը համագործակցում է ԼՂՀ Շահումյանի շրջանի և Տավուշի մարզի համայնքների հետ: Կազմակերպվել են հանդիպումներ վարչական շրջանի, շրջվարչակազմի և համայնքների ղեկավարների ու աշխատակազմերի տարբեր բաժինների աշխատակիցների միջև: Իրականացվել են փոխադարձ այցելություններ, աջակցության ծրագրեր, փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են կրթական ու մշակութային միջոցառումներ: Վարչական շրջանը համագործակցում է նաև Կուբանի կազակների հայկական միավորման հետ:
- Վարչական շրջանը հյուրընկալել է բուլղարահայ համայնքի ներկայացուցիչներին՝ համայնքի հոգևոր թեմի առաջնորդ Հայր Իսահակի ուղեկցությամբ: Պատվիրակության կազմում ուխտագնացությանը մասնակցում են Բուլղարիայի տարբեր քաղաքներից ժամանած երիտասարդներ:

Մենք
հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-889
qanaqer_zeytun@yerevan.am